

1740

891 715
8-75

2003

Փիֆիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

91. 71-3
S-65

№ 91

ՏԻՒՏԶԵՎ

ԿՈՇԿԱԿԱՐԸ ԵՐԱԺԻՇՏ

Փարզմ. առաերէնից

ՕՐ. Ն. ՂԱԼՈՒՄԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտմանցի

Типогр. М. Д. Ротманица, Гол. пр. д. № 41.

1895

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառ-
վում են ընկերութեան գրասենեակում եւ Կենտրոնական
գրավաճառանոցում.

1	Թաւամազ մեղու,	{	Թարգ. օր. Ն. Տէր-	— 40
2	Կարմիր լապտեր,	{	Մարկոսեան.	— 30
	Նոյնը կաղմած	.	.	— 50
3	Մանկական երգեր,		Գամառ-Քաթիպա.	— 15
4	Թովմաս եղբօր տնակը	{	Թ. օր. Ն. Տէր-	— 45
	Նոյնը կաղմած	{	Մարկոսեան	— 60
5	Մօրեն և նրա ջնջերու հնարները.	.	.	— 10
6	Նեղ և խոնաւ բնակարանների մատին	.	.	— 10
7	Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց	—		80
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսու- թեան, Մօրիա Բլօքի,	.	.	— 50
9	Գամառ-Քաթիպայի բանաստ. (սպառ).	.	.	— 50
10	Ռօբինզօնի պատմութիւն	.	.	— 60
11	Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի	.	.	— 75
12	Գառնուկ և Լուսատտիկ, Շմիդտի.	.	.	— 25
13	Սալեաթ-Նօւլա, ազգային երգիչ	.	.	— 5
14	Ծննդեան պատմութիւնը	.	.	— 10
15	Ազաթանգեղեղաչ պատմութիւն	.	.	— 1
16	Գիւղական Խալիֆալ. Ա. Արարատ.	.	.	— 50
17	Վանալ Սադ. Գ. Շէրենցի	.	.	— 75
18	Փնջիկ. գրեց Աղէքս. Արարատեան	.	.	— 20
19	Նամուս. վեպ. գրեց Շիրվանդադէ	.	.	— 1
20	Ստեփաննոսի Տարօնեցոյ Առողկան Պատմ. տիեզերական. 2-րդ. տպագ.	.	.	— 2
21	Թիֆլիսեցոյ մտաւորիկեանքը	{	Գ. Տէր	1 50
	Նոյնը ընտիր թղթի վրայ	{	Ա. զէքս.	2 —
22	Ղևնդ պատմագիր.	.	.	— 2
23	Սրբազան պատմութիւն հին ուխտի. Սա- հակ քահանայ Սահակեանի.	.	.	— 30
24	Նոյնը ուսուցիչների համար	.	.	— 1 75
25	Սոկրատէս, Թարգ. օր. Թ. Ստեփոկեան.	—		10
26	Պատմութ. Հայոց. Պալասանեանի	.	.	— 1 50

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

891.715

№ 91

8-75

ur

ՏԻՒՏԵԿ

ԿՈՇԿԱԿԱՐԸ ԵՐԱԺԻՇՏ

Թարգմ. ուսերէնից
ՕՐ. Ն. ՂԱԼՈՒՄԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Գ. Ռօտինեանցի

Типогр. М. Д. Ротинианца, Гол. пр. д. № 41.

1895

ԿՕՇՎԱԿԱՐԸ ԵՐԱԺԻՃՏ

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Апрѣля
1895 года.

Յուզիսի ջերմ օրերից մէկն էր: Տաքացած սալայատակից և տան պատերից տօթ էր բարձրանում, ինչպէս վառարանից: Արևի ուղղահայեաց ճառագայթները այրում էին գետինը: Այդ միջոցին մայրաքաղաքի յետ ընկած դատարկ փողոցներից մէկով՝ գնում էր մի տասնումէկ տարեկան աղայ: Նայելով նրա հաստ կտաւից կարած շերտաւոր բաճկոնին, կարելի էր ենթադրել, որ արհեստանոցի աշակերտ էր: Նա բոլորովին մրոտուած և կեղտոտուած էր և նմանւում էր սև ագռաւի. քրքրտինքը թափւում էր նրա կոպիտ քնթառ երեսից. նա քայլերը դանդաղ փոխելով սուլում էր մի ինչ որ երգ, ձեռքերը շարժելով և ինքնավստահ ու համարձակ կերպով նայում էր այս ու այն կողմը: Յանկարծ այդ երեսայի ականջոյն ընկան երկարաձիգ և տխրագին հնչիւններ: Նա զարմացած յետ նայեց և ականջ դնելով տեսաւ, որ այդ ձայները գալիս են մի չարկանի փայտեայ տան փոքրիկ բաց

պատուհանից: Ածում էին մի ինչ որ գործիքի վրայ, բայց թէ ինչ գործիք էր այդ, տղան չը կարողացաւ որոշել: Հետաքրքրութիւնից շարժուած արագ վազեց փողոցով և զգուշութեամբ մօտենալով սենեակի լուսամուտին, կանգնեց ոտքի ծայրերին և ներս նայեց: Փոքրիկ, բայց մաքուր և սիրուն կահաւորուած սենեակի հանդիպակաց պատի մօտ, նստած էր մի նիհար ծերունի՝ ջութակը ձեռին. նրա ալեւոր ու կարճ խուզած մազերով զլուխը՝ թեքուած էր մի կողքի վրայ. նա ազատ և կանոնաւոր կերպով քաշում էր կնտնտոցը լարերի վրայով, չհեռացնելով միեւնոյն ժամանակ իւր աչքը սև թաւշեայ շրջանակում գետեղուած պատկերից, որ դրուած էր իւր փոքրիկ գրասեղանի վրայ: Տղան շատ զուտուեց իւր աչքերին, բայց իզոյր, չկարողացաւ պատկերը որոշել: Սենեակը համարեա՞ մութն էր, որովհետև մուգ կապոյտ վարագոյրները կիսով չափ ծածկուած էին. փայլում էր միայն պատկերի ապակին և պսպղում կիսախաւարի մէջ: Ծերը հաւանական էր, որ չէր նկատել կողմնակի հանդիսատեսին և շարունակում էր նուագել առաջուայ պէս, անընդհատ նայելով պատկերին: Տղան լսում էր վիզը ձգած և կզակը կպցրած լուսամուտի տախտակին: Նա ոչ թէ

միայն չէր լսել, այլ գաղափար անգամ չ'ուներ այդպիսի հրաշալի երաժշտութեան մասին: Նա լսեց և ինքն էլ չ'կարողացաւ հասկանալ ինչ որ այդ ռոպէին իւր սիրտը զգում էր: Յանկարծ նրա միտն ընկաւ իւր հեռու և մոռացուած ծննդավայրը, որտեղից չորս տարի առաջ բերել էին իրան. գեղեցիկ, աղօտ երազի նման նրա յիշողութեան մէջ խառը երեւեցան ստուերախիտ անտառը, ականակիտ քչքչանառուակը, արևակէզ դաշտերը, երևում էր մի ծանօթ և խորշումած զէմք. նրան մինչև անգամ թուաց որ մէկն իւր անունը տալիս է: Տղայի աչքերում արտասուքներ երեւեցան և լացը խեղդում էր նրան, իսկ ձայները քանի գնում այնքան աւելի տխրագին և ուժով էին հնչում. նրան թւում էր, որ դա ջութակի ձայնը չէ, այլ ծերունին ինքն է հեկեկում և նրա հեկեկանքները տխուր տարածում և անհետանում են հեռու տարածութեան մէջ: Իբրև պատասխան այդ սրտամորմոք ձայների, յանկարծ լուսամուտի տակ լսուեց մի հանդարտ ու խուլ հեկեկանք: Տղան չկարողացաւ տանել, արցունքները հեղեղի պէս թափեցին նրա աչքերից: Յանկարծ նա վախենալով իւր արտասուքներից՝ հեռացաւ լուսամուտից և ինչքան ոյժ ունէր, սկսեց փախչել

փողոցով: Երաժիշտը զարմացած բարձրացրեց իւր գլուխը, ջութակը դրեց բազմոցի վրայ, մօտեցաւ պատուհանին և նայեց դէպի փողոց: Փողոցում ոչ ոք չ'կար. միայն հեռւում նըշմարեւում էր շերտաւոր բաճկոնակով երեխան. նա վազում էր բոբիկ ոտներով և լայն թևերով երեսը սրբում: Մերը մի րոպէ միայն կանգնեց պատուհանի առաջ և յետոյ կամաց դարձաւ իւր տեղը. սեղանի վրայից երկու ձեռով վերցրեց պատկերը, մի քանի րոպէ անընդհատ նայեց նրա վրայ և յանկարծ մեղմ հառաչանքով ամուր ու ջերմաջերմ կայցրեց իւր շրթունքներին: Նրա աչքերում արտասուքներ փայլեցին: Երեխան այդ ժամանակ հասնելով փողոցի ծայրը, շուռ եկաւ դէպի մի նեղ փողոց և արագ անցաւ փայտեայ կամուրջով, հազիւ շունչը բռնելով: Փողոցի ծայրին նա ներս մտաւ մի հին և ծռուած տնակի ցածլիկ դռնով: Դռան ճակատին կախուած էր մի ժանգոտած հին նշանակ, որի վրայ երևում էր մի խաչտաբղէտ կօշիկ, որ երբեմն ոսկէ գոյն էր եղել: Դրա տակ գտնվում էր հետեւալ խրթին գրութիւնը.

Կօշիկների Ս. Պ. ԻԻԱՆՈՎ կարկատում

կարում են ԿՕՇԿԱԿԱՐԸ նորերը:

Արուեստագէտը յատկապէս կամեցել էր գրել

երկու տող. վերևը «Ս. Պ. Իւանով, կօշիկար», ներքևը ճորտգում է կօշիկ, կարում է նորերը». բայց տառերը և տողերը այնքան խառնուել էին, որ առաջին անգամ նայելիս թւում էր թէ մի տող է:

Բայց Ստեփան Պետրովիչը այնքան էլ չէր հոգում իւր նշանակի մասին. նրան առանց այդ էլ ճանաչում էր ամբողջ թաղը և նա միշտ էլ բաւականին գործ էր ունենում: Ստեփան Պետրովիչը լաւ և բարի մարդ էր, աժան էր կարում և լաւ կաշի էր գործածում, պատուէրները կատարում էր ճշտութեամբ. և եթէ հարբում էր, այդ էլ շաբաթը մէկ անգամ հազիւ էր պատահում. բացի դրանից նա միշտ պատրաստ էր ապառիկ պատուէրներ վերցնել: Նա բնակոււս էր երկու փոքրիկ մրոտուած և կիսամութ սենեակներում: Առաջին սենեակում նրա արհեստանոցն էր, որտեղ նա բանում էր իւր երկու օգնականներով, իսկ միւսը նրա ննջարանն էր: Ստեփան Պետրովիչը այրիացած էր, դրա համար էլ նրա կենցաղավարութիւնը մի բանի նման չէր. ինքը և իւր երկու բանւորները ճաշում էին պանդոկում, իսկ թէյ խմում էին սրճանոցում: Այս բոլորը սաստիկ դիւրացնում էր նրա կեանքը և նա իւր վիճակից շատ գոհ էր:

— Ո՛ր էիր կօրել, Բարսեղ. այ տես ես

քեզ ինչ կ'անեմ. գոռաց Ստեփանը տեսնելով ներս մտնող տղային. Միքայել, դարձաւ նա զէպի բարձրահասակ, նիհար բարակացաւոտ տեսքով, քսան տարեկան օգնականին. քեզանից մօտիկ է, քաշիւր դրա ականջները:

Միքայելը վեր կացաւ տեղից, անխօս բռնեց Բարսեղի ականջից և մի քանի անգամ կամաց թափահարեց: Սրանից յետոյ նորից ամենքը նստեցան իւրեանց գործին:

Ստեփանը, որ մի կարճիկ, լայնաթիկունք մօտ քառասուն տարեկան մարդ էր, նստած էր պատուհանի առաջ և ուշի ուշով մի մեծ կտոր կաշուից ձիտքեր էր ձեռնում. նա երբեմն ձեռքի գործը թողնում, գլուխը թեքում, ակնապիշ նայում էր գործին: Արդեօք լաւ կ'լինի, ասում էր ինքը իրան:

Այս անգամ Ստեփանն առանձին ջանք էր անում. կօշիկները պատուիրել էր թաղապետի օգնականը և նա չէր ուզում նրա մօտ սեւ երես մնալ:

«Մենք ուրիշներից վատ չենք կարիւ, ասում էր նա ինքն իրեն: Այդ ամբողջ օրը Բարսեղի քէֆը լաւ չէր, նա ուռած, փքուած նստած էր մի անկիւնում, իսկ նրա ականջում հնչում էր առաւօտը լսած հրաշալի երաժշտութիւնը: Երեկոյն գործը հէնց որ վերջացրեց, Բար-

սեղը հանեց իւր հարմոնիկը և ուզեց նոյն կերպ ածել, բայց ոչինչ չ'դուրս եկաւ: Լսածի և նուագածի մէջ նմանութիւն անգամ չկար:

Բարսեղը զայրացած հարմոնիկը շարտեց նստարանի տակ և փողոց դուրս եկաւ, ուր դրացի տղերքը վէզ էին խաղում: Միւս օրը յարմար բոպէ գտնելով, Բարսեղը դարձեալ վազեց զէպի իւր ծանօթ տնակը. բայց ինչքան էլ ականջ դրեց, ինչքան էլ նայեց, չ'կարողացաւ ոչ բան տեսնել և ոչ էլ լսել: Պատուհանը փակ էր, սենեակը դատարկ: Երևի երաժիշտը տանը չէր, միայն սեղանի վրայ բազմեցրած էր թաւշեայ շրջանակում դրուած պատկերը, իսկ նրա մօտ սև կաշէ պատեանի մէջ դրուած էր ջուլթակը: Այդ օրուանից Բարսեղը դարձեալ մի քանի անգամ վազեց զէպի տնակը. բայց միշտ անյաջող: Երաժիշտը կամ տանը չէր լինում, կամ նստած էր լինում բազմոցի վրայ անշարժ. նա ձեռքերը կրծքին ականապիշ նայում էր պատկերին: Բարսեղը լաւ ուսումնասիրեց նրա երեսի գծագրութիւնը և նրա կերպարանքը: Նա մի բարձրահասակ նիհար մարդ էր, տփգոյն, կրնճառոտ, ածլած երեսով, աղօտ և տրտում հայեացքով. արտաքինին նայելով վաթսուն տարեկան կ'լինէր: Նա միշտ հազնում էր միևնոյն սև երկայնաքղանց բաճկոնակը: Թէպէտ երա-

ժըշտի և Բարսեղի մէջ որեւէ խօսք ու զրոյց չէր եղած, որովհետեւ ծերունին նրա գոյութիւնն անգամ չ'զիտէր. բայց Բարսեղն ականջ սիրեց նրան՝ ինքն իրեն վճռելով, որ այդ մարդը անշուշտ շատ բարի պէտք է լինի: Շարունակ նրան տխուր տեսնելով, երեսան սրբտով ցաւում էր և շատ անգամ գլուխը կոտրում էր, որ իմանայ նրա տխրութեան պատճառը:

Յուլիսի հրաշալի օրերից մէկն էր. արեւն արդէն իւր ոյժը կորցրել էր և օդի մէջ զովութիւն էր տիրում: Բարսեղն օգուտ քաղելով ազատ ընկնից՝ դուրս փախաւ արհեստանոցից, ահ ու դողով մօտեցաւ իւր սիրելի պատուհանին և ներս նայեց: Մերը կանգնած էր սեղանի մօտ և ջութակը հանում էր պատեանից: Երեսայի սիրտը ուրախութիւնից թնդաց: «Ամենին նուագել չի ուզում», մտածեց տղան և առանց աչք հեռացնելու սկսեց հետեւել երաժշտի բոլոր շարժումներին: Նա նայում էր անթարթ աչքով, թէ ինչպէս ծերուկը ջութակը հանեց, ինչպէս ականջները բռնեց, մատերով լարերին խփեց և մի քանի անգամ նրանց վրայով կնտնոցը շարժեց. յետոյ նա յետ քաշեց կնտնոցը և կարծես մի բանի վրայ սկսեց մտածել: Բարսեղը շունչը քաշած,

անհամբեր հայեացքով նայում էր կնտնոցին և սպասում: Տղայի սիրտը բաբախում և թռ-թռում էր շերտաւոր բաճկոնի տակ:

Յանկարծ կնտնոցը արագ շարժուեց օդի մէջ և ուժեղ ու հաստատուն զարկով լսուեց լարերի ձայնը: Լսուեց երկարաձիգ և մարդուս հոգին թափանցող մի հնչիւն. աղօտաձայն տարածուեց նա խորին լռութեան մէջ, դրան յաջորդեց երկրորդը. հնչիւնները հետզհետէ ոյժ էին ստանում և թնդեցնում էին սենեակը, իբրեւ ալիքներ տատանւում էին նոքա, երբեմն ուժեղանում, երբեմն մեղմանում, երբեմն էլ արագ փոփոխուելով՝ դառնում էին խաղաղ և աղօտ շշնջիւն:

Բարսեղը աչքերը չռած, բերանը կիսախուփ կպել էր պատուհանին և աշխարհը մոռացողի պէս բոլորովին ականջ դառած լսում էր այդ հրաշալի և սրտազրաւ ձայները:

— Այ թէ արտեղ ես. ահա թէ ուր ես փախչում ամեն անգամ, խօսեց նրա յետեւից վարպետ Ստեփանը և իւր ուժեղ ու կոշտացած ձեռքով ամուր քաշեց Բարսեղի ականջից:

Այդ բանը Բարսեղի մտքովն անգամ չէր անցել, ուստի զգացած ցաւից ողբաձայն դուռաց: Երաժիշտը յետ նայեց, ջութակը ցած

դրեց և մօտեցաւ պատուհանին: Տեսնելով վարպետին, ծերունին սիրալիր ժպտաց և ողջունեց նրան իբրև հին ծանօթի:

—Ա՛, բարով Ստեփան, ինչպէս ես, վաղուց է չեմ տեսել քեզ:

—Է՛հ, կառավարւում ենք պ. Գօղլիբ, ուրախ ժպտաց վարպետը. Աստուած ողորմած է: Իսկ դուք ինչպէս էք. ճշմարիտ բաւականին ժամանակ է, որ մենք չենք տեսնուել, թէպէտ հարեաններ ենք, բայց անցեալ տարուանից, երբ ես ձեր պայուսակը կարկատեցի, ես ձեզ էլ չեմ պատահել:

—Այդ ո՞վ է, քո տղան է. ինչո՞ւ լացացրիր դրան:

—Իմս է, աշակերտ եմ վերցրել, բայց ահա մի քանի ժամանակ է, որ սկսել է փախչել. հէնց որ աչքս հեռացնում եմ սրանից, մէկ էլ տեսնում եմ կորաւ. ես կարծում էի, որ ուրիշ տեղ է գնում, բայց նա ձեր պատուհանի տակ գլուխը կախել, ձեր ածելուն է ականջ դնում: Դեռ սա քիչ է, ես տանը ցոյց կ'տամ սրան, այս ասելով վարպետ Ստեփանը նորից թափահարեց Բարսեղին:

—Է՛հ բաւական է, Ստեփան, միջամտեց Գօղլիբը, խնդրում եմ թող դրան. իսկ դու, ա՛յ որդի, դարձաւ նա Բարսեղին, ինչո՞ւ ես

փախչում, այդ լաւ բան չէ, դու պէտք է աշխատես և չ'ծուլանաս: Բարսեղը լուռ էր. լուռ էր և բոլոր ուժով աշխատում էր զսպել իւր հեկեկանքը:

Դու մի՞թէ այդչափ սիրում ես երաժշտութիւն, շարունակեց Գօղլիբը:

—Ձեմ իմանում, լացախառն պատասխանեց Բարսեղը, ինձ դուր է զալիս երբ դուք նուագում էք, ձեր ածելուց իմ սիրտը կըտրատւում է և ես միշտ լաց եմ լինում, աւելացրեց նա, յանկարծ համարձակ նայելով Գօղլիբին. նա էլ իւր կողմից աչքերը յառեց աղաչի վրայ:

—Գուցէ դու մի որևէ գործիքի վերայ նուագել գիտես:

—Սա, պարոն, փառաւոր հարմոնիկ է նուագում, խօսեց վարպետը. սա երբեմն այնպէս հիանալի ածում է, որ մենք ապշում ենք:

Բայց ափսոս որ դեռ այնքան փոքր է և չիմար, որ չ'արժէ ականջ դնել սրան:

—Ո՞րտեղ ես սովորել:

—Ինձ ու ինձ. լսել եմ ուրիշներին ածելիս, ես էլ հետեւել եմ նրանց. մի փոքր ուղղուելով և աւելի համարձակ պատասխանեց Բարսեղը:

—Բայց մի՞թէ հարմոնիկը երաժշտական:

գործիք է, միայն գործիքի անուն է կրում, եռանդով վրայ բերեց Բարսեղը և ինքն էլ աշխույժ ստացաւ։ Այ՛ ձեր գործիքին ինչ կ'ասեմ, այդպիսի գործիքի վրայ ածել սովորելու համար կեանքս չեմ խնայիլ. հարմոնիկը ինչ է որ։ Զննող հայացքով երկար նայում էր պ. Գողիթը տղայի զուարթ երեսին։

— Ո՛վ է իմանում, ինքն իրեն մտածեց երաժիշտը, գուցէ այս տղայի մէջ տաղանդ կայ։

Լսիր, Ստեփան, դարձաւ նա դէպի վարպետը, թող երբեմն այս երեխան գործը վերջացնելուց յետոյ, երեկոները գայ ինձ մօտ. վնաս չունի. նա երաժշտութիւնը սիրում է. քեզ համար էլ լաւ է, որ նա ազատ ժամերին ինձ մօտ նստի, քան թէ դուրսը տղաների հետ ստահակութիւն անի։

— Ինչո՞ւ չէ, պ. Գողիթ, ես ոչինչ չ'ունիմ դրա դէմ, պատասխանեց Ստեփանը՝ մասամբ զարմանալով երաժշտի առաջարկի վրայ։

Եթէ որ այդ ձեր ցանկութիւնն է, ինձ համար էլ մեծ բաւականութիւն է. անշուշտ տղային օգտաւէտ է ձեզ մօտ լինել, քան թէ անպատկառ և անխոհեմ փողոցային տղայոց հետ. միայն վախենում եմ, որ ձեզ ձանձրացնի և անհանգստութիւն պատճառի։

— Ե՛հ, այդ իմ գործն է, ժպտաց Գողիթը.

եթէ կ'ձանձրացնի՝ դուրս անելը հեշտ է։

Այդօրուանից Բարսեղը համարեան թէ ամեն երեկոյ վազում էր Գողիթի մօտ, որ բնակւում էր միացնակ, իւր պառաւ Ամալիա խոհարարուհու հետ։ Նրա փոքրիկ բնակ արանը բաղկացած էր՝ երեք սենեակից։ Մէկը նրա գրասենեակը և հիւրասենեակն էր, որի պատուհանները նայում էին դէպի փողոց։

Գողիթը երբ որ տանն էր լինում՝ միշտ նստում էր այդ սենեակում, փոքրիկ բազմոցի վրայ, որի դիմացը դրուած էր սեղան՝ վրան էլ մի պատկեր։ Բարսեղն երբ գալիս էր՝ նստում էր դռան մօտ եղած աթոռի վրայ և այդ տեղից ամենայն ուշադրութեամբ լսում էր Գողիթի նուագը։ Բարի գերմանացին նրա հետ շատ քաղցրութեամբ էր վարւում, այդ իսկ պատճառով տղան շատ շուտով ընտելացաւ նրան։ Բարսեղն ամբողջ ժամերով նստում էր նրա մօտ և չէր տխրում, չ'նայելով որ Գողիթն ՚ի բնէ սակաւախօս էր և համարեան չէր խօսում նրա հետ։ Տղան իւր այցելութեան առաջի օրից ուշադրութիւն դարձրեց սեղանի վրայ դրած պատկերին և աշխատում էր որքան կարելի է լաւ դիտել։ Այդ պատկերը, որ մի թերթ թղթի մեծութիւն ունէր, նկարած էր ջրային ներկերով և ներկայացնում էր մի վա-

յելչակազմ և գեղեցիկ երիտասարդ. շէկ մա-
զերը ծփում էին նրա ուսերի վրայ, դէմ-
քը գունատ էր և նիհար, աչքերն էլ կապույտ
և խոշոր: Նա հագած էր տիրօլցու նման՝ սև
թաւշեայ անդրավարտիկ, մուգ կապոյտ գու-
լպաներ և ճարմանդաւոր մաշիկներ: Մուգ շա-
գանակագոյն և լայնաշուրթ գլխարկը ընկած
էր նրա ոտների մօտ ձգուած վերնադպեստի
վրայ: Պատանին մի ձեռքով բռնած ջութա-
կը, միւսով կնտնտոցը, կանգնած էր ծովի ա-
փին, թափանցիկ և կանաչագոյն կոհակները
փրփրակալում էին համարեա թէ նրա ոտքերի
տակ: Հեռու հորիզօնի վրայ սպիտակին էր
տալիս մի նաւի առագաստ: Թաւշէ լայն շըր-
ջանակի վերայ ամրացրած էին սպիտակ մե-
տաղէ տառերից կազմուած բառեր և թուա-
նշաններ, որ պատկերացնում էին 1866: Տա-
ռերը ռուսերէն չէին, այդ պատճառով Բար-
սեղը չ'կարողացաւ կարդալ: Շարունակ նայելով
պատկերին և պատանու դէմքին՝ Բարսեղը շու-
տով մեծ նմանութիւն գտաւ նրա և Գոգլիբի
մէջ: Շատ անգամ Բարսեղն ուզում էր հար-
ցնել՝ թէ այդ ում պատկերն է, բայց սիրտ
չէր անում: Վերջապէս մի անգամ իւր յուզ-
մունքը զսպեց և յարմար բոլոր գտնելով վճռեց
հարցնել՝ թէ և երկչոտութեամբ. պ. Գոգլիբ,

ես վաղուց է ուզում եմ հարցնել ձեզ՝ թէ
այդ ում պատկերն է:

Մերունին ցնցուեց, աչքերը դարձրեց դէ-
պի պատկերը, յետոյ Բարսեղին նայելով յօն-
քերը կիտեց և կըջկտուր ձայնով պատասխա-
նեց:

— Այդ իմ որդին է:

— Իսկ ձրտեղ է լինում դա, աւելի ևս երկ-
չոտութեամբ ու անհամբերութեամբ հարցրեց
Բարսեղը:

— Դու հարցնում ես թէ ձրտեղ է նա, տար-
օրինակ ծիւղ բացականչեց Գոգլիբը: Ո՛հ, տղաս,
եթէ իմանայիր թէ այդ հարցումով սրտիս ճի-
ւարերին ես դիպչում...

Դու հարցնում ես՝ ուր է տղաս. նա խեղ-
ղովեց և խեղդուելու օրից անցել է հինգ տա-
րի, իսկ ինձ թւում է թէ այդ երէկ էր. նա
խեղդուեց հէնց այն ծովի մէջ, որի ափին
նկարել է նրան նկարիչը: Ո՛հ, Էդմունդ, սի-
բիւի Էդմունդ:

Այս, ինչո՞ւ, ինչո՞ւ թողեցիր ինձ, յուսա-
հատ սրտով ձեռքերը տրորելով ասում էր Գոգ-
լիբը: Մի փոքր լուրթիւնից յետոյ յանկարծ
վեր թռաւ նա և մօտենալով Բարսեղին, ասաց.
Լսիր, տղաս, տես քեզ ինչ եմ պատմելու. շատ
կարելի է իմ ասածները բոլորը չ'հասկանաս,

բայց այդ միեւնոյն է. դու միայն ականջ դիր ինձ. լռիր և լսիր: Դու ասում ես, թէ ես լաւ եմ նուագում: Բայց եթէ իմանայիր, թէ իմ որդիս ինչպէս էր նուագում... Ահա այս նրա ջութակն է. բայց ինչպէս կարելի է ինձ նրա հետ համեմատել. իմ և նրա նուագելու մէջ սարեր ու ձորեր կան: Ես հասարակ նուագածու եմ, վարպետ, ուսուցչապետ երաժշտութեան և աւելի ոչինչ: Այս միեւնոյն ջութակը նրա ձեռքին հրաշքներ էր գործում: Նա հանճար էր. այդ խոստովանում էին ամենքը, ովքեր գէթ մի անգամ լսում էին նրա նուագելը:

Տասնեւորս տարեկան ժամանակ նա Վէնայում համերգ էր տալիս և ամբողջ քաղաքը թափւում էր նրան լսելու. ականաւոր երաժիշտները և գերասանները հիանում էին նրանով և նախանձում էին նրան: Փարիզում նրան ձեռքերի վերայ դուրս տարան դահլիճից, իսկ Հռոմում ինքը պապը փափագեց նրան տեսնել. նրան հրաւիրեցին պալատ, սուրբ հայրը երկար լսեց նրան և յետոյ դառնալով ինձ՝ ասաց:

«Բոլոր հայրերը իրաւունք ունեն ձեզ նախանձելու, ձեր որդին իսկ և իսկ հանճար է»:

Ո՛հ, տղաս, դու չես կարող իմանալ, թէ ինչ էի զգում ես այդ բոպէին: Բայց որքան նա բարի էր, ինչքան քաղցր էր վարւում ինձ

հետ, չ'նայելով որ այդ միջոցին նա ժողովրդի սիրելին էր. նա միշտ ինձ հնազանդ էր. իմ խօսքը նրա համար օրէնք էր. նա ինձ խնամում և պահպանում էր: Նա տասնեւթ տարեկան էր, բայց օրիորդի պէս համեստ և մանկան պէս պարզամիտ էր: Դու տեսնում ես շրջանակի վրայի թուականը: Ո՛հ, այդ զարհուրելի թուական է... 1866 թուին մենք ժամանեցինք Նիցցա: Սա մի ծովեզրեայ քաղաք է... Իմ Էդմունդն առաջին անգամ էր ծով տեսնում և այդ պատճառով հրապուրուեց նրանով: Նա ամբողջ ժամերով կանգնում էր ծովի ափին և ուշադրութեամբ լսում ալիքների հրաշափառ խաղին: Ալիքների այդ ցայտման մէջ նրա երաժշտասէր լսելիքը որսում էր մի անսովոր, իրեն միայն հասկանալի ձայների ներդաշնակութիւն: Այդ ամենը տպւորւում էին նրա սրտում և նա աշխատում էր այդ արտայայտել իւր ջութակի հնչիւնների միջոցով: Եւ հէնց այդ տէնչը կործանեց նրան. ծովով հրապուրուած՝ նա յաճախ գիշերները, երբոր հարաւային հրաշագեղ լուսինը բարձրանում էր ծովածոցից, նստում էր մակոյկ՝ մի ծեր պաշտօնաթող նաւաստու հետ և աներկիւղ նաւելով բաւականին հեռանում եզրից: Նա հետը վերցնում էր ջութակը և այնտեղ նուագում:

Այ, եթէ դու լսած լինէիր նրան... Կարծես թէ ալիքներն էլ կանգ առած ալանջ դնելիս լինէին նրան...

Նա նուագում էր, իսկ փոթորիկների և արիւնհեղ կռիւների մէջ եփուած ծեր նաւաստին, որը շատ անգամ մահուան վտանգների էր ենթարկուել՝ լալիս էր մանկան պէս:

Այդ ժամանակ որդու հետ ծանօթացաւ մի երեւելի ֆրանսիացի նկարիչ, որ և նկարեց նրան ծովի ափին, այն դիրքով, ինչպէս ահա տեսնում ես այս պատկերի վրայ: Ո՞վ կարող էր մտածել, որ այս պատկերը վերջացնելուց երեք օր յետոյ, Էդմոնդին աստղը խաւարած պիտի լինէր...

Այդ ժամանակ Նիցցայում ապրում էր մի նշանաւոր անձնաւորութիւն. նա կամեցաւ կազմել գեղարուեստական երեկոյթ. իմ որդին էլ հրաւիրուած էր այդ տեղ: Նախընթաց երեկոյեան մենք երկուսով նստած էինք պատրշկամբում. հեռուից կապույտին էր տալիս ծովը. Էդմոնդս տխուր էր.

— «Հայրիկ, ասաց նա, չ'գիտեմ ինչո՞ւ սիրաս տխուր է, ուզում եմ մակոյկով զբօսնել, չի՞ս գալ հետո: Այդ օրը տրամադրութիւնս լաւ չէր և ես մերժեցի: Նրան էլ խորհուրդ չէի տալիս գնալ, բայց նա իւր ասածն

արեց: Շատ հանդարտ երեկոյ էր: Երկնքի վերայ ամպի կտոր չ'կար, ծովը խաղաղ էր... Ես նրան թողեցի և ինքս շուտով պառկեցի քնելու: Յանկարծ կէս գիշերին կարծես մէկը խփեց ուսիս և դուրս քաշեց ինձ անկողնի միջից... Ես հազիւ աչքս բաց արի և պարզ լսեցի որդու ձայնը. նա ինձ էր կանչում. ես վեր թռայ տեղիցս և տրորեցի աչքերս... Լաւ ալանջ դնելուց յետոյ, յանկարծ մի ինչ որ դող ընկաւ սիրտս: Դուրսը շառաչում էր սարսափելի փոթորիկը, կատաղի բամին փչում և հեծում էր. նրա սուբ ողբը խառնւում էր ծովի հետ: Ուշս կորցրած ես դուրս վազեցի պատշկամբ. այն ինչ որ ես տեսայ, ստիպեց ինձ ցնցուել: Ծովի ահագին ալիքները մռնչալով և ճիչ ու ողբ արձակելով բարձրանում էին մէկը միւսից աւելի և անզուսպ արագութեամբ թափւում էին մէկ մէկու հրելով, բռնչելով և ամեհի դազանների պէս կատաղութեամբ մռնչելով թոթւում էին փրփրողէզ բաշերը, ընկնում էին թնդալով և հեծելով փոխւում կաթինների և եռացող փրփուրի: Մի կերպ հաղնուելով, խելքս կորցրած՝ վազեցի դէպի ծովը և այս ու այն կողմն էի ընկնում, ողբում, կանչում, ձեռքերս տարածում:

Ես որդուս էի կանչում, նրա անունն էի

աղաղակում... Ես ծունկ չոքած խելակորոյս
յուսահատութեան մէջ պաղատում էի երկնքին,
որ նա ազատի որդուս... Ո՛հ, ո՞վ կարող էր
հասկանալ իմ յուսահատութիւնը կամ տան-
ջանքը. իսկ ծովը մռնչում և դղրդում էր,
կարծես թէ ծաղրում էր ինձ...

Լուսադէմին փոթորիկը հանդարտուեց, իսկ
ես դարձեալ կանգնած էի ծովի ափին և ա-
ռանց աչքս հեռացնելու նայում էի խուլ տա-
տանուող և հանդարտուող ծովին: Ես սպասում
էի, յոյս ունէի: Ես, յիմարս, չէի հաւատում
ինձ պատահած դժբախտութեանը: Բայց մի օր
ու զիշեր անցնելուց յետոյ, ամբողջ Նիցցան
դղրդաց: Մի քանի մակոյկ ուղարկեցին ծովը.
ամենքը մեծ եռանդով սկսեցին որոնել. բայց
ոչ Եդմոնդի և ոչ Ռոբերտ նաւաստու մասին
չ'կարողացան իմանալ: Երեք օրից յետոյ եկաւ
անգղիական նաւը. նա ծովի վրայ հողմից
բռնուել էր. ահա թէ ինչ էին պատմում ինձ
նաւաստիները:

Արդէն բաւականին ուշ էր, փոթորիկը
հէնց նոր էր սկսուել. նաւաստիները դուրս
էին թափել տախտակամածը և սկսել էին պա-
րաններն ամրացնել: Յանկարծ մի քանի սափէն
իրանցից հեռու կաջձակի փայլած լուսով նրանք
տեսան մի մեծ մակոյկ, որ յուսահատաբար

կռում էր ալիքների հետ: Մակոյկում նստած
էին երկու հոգի, մէկը թիավարում էր, իսկ
միւսը նուագում ջութակի վրայ...

Փոթորիկի մռնչիւնը խեղդում էր երաժշտու-
թեան ձայնը, ալիքները խաղացնում էին մա-
կոյկը, բայց նա առանց ուշադրութիւն դարձ-
նելու այդ օրհասական վտանգի վրայ, շարու-
նակ նուագում էր. գլխարկը վայր էր ընկել
նրա գլխից և մազերը քամուց ծածանում
էին... Նաւաստիներն այնքան զարմացել էին
այս երևոյթի վրայ, որ մնացել էին բերան-
ները բաց:

Կայծակը փայլատակեց և հանդաւ: Վերա-
հաս խաւարը նորից ծածկեց ամբողջ ծովն ու
մակոյկն իւր տարօրինակ նաւորդներով. բայց
մի րոպէից յետոյ կրկին լոյսը փայլիւեց և նա-
ւաստիները, համարեան նաւամատոցի մօտ, տե-
սան շուռ եկած մակոյկը և մահի դէմ մար-
տնչող երկու մարդկանց:

Չ'նայելով սարսափելի վտանգին՝ նաւապետը
հրամայեց իջեցնել մի մակոյկ: Մի քանի
քաջասիրտ մարդիկ թափուեցին մակոյկը,
բայց արդէն ուշ էր. համարեան թէ ազատող-
ների աչքի առաջ ալիքները խլեցին երկու
խեղդուողներին և կլանեցին նրանց:

Այդ րոպէին մի ինչ որ բան երևաց մա-

կոչկի ծայրին. այդ ջութակն էր: Չարմանալիք դիպուած, ալիքները կուլ տալով որդուս, դուրս են ձգում ջութակը և թողնում ինձ, իբրև չիշատակ: Ահա այդ օրուանից ես անբաժան եմ սրանից... Այն ժամանակ ես զոր է'գնացի նրա հետ. ես կամ նրան կ'նախազգուշացնէի ժամանակին կամ կ'ընդհատեի միասին:

Վերջացնելով այս բոլորը Գողիթը յուսահատութեամբ բռնեց իւր գլուխը և ողբալով ընկաւ բազմոցի վրայ ու սկսեց դառն կերպով հեկեկալ: Բարսեղը վեր թռաւ տեղից աննկարագրելի յուզմունքով փաթաթուեց Պ. Գողիթի ոտներին և սկսեց դառնապէս լալ:

Երկար ժամանակ սրանք այսպէս լաց էին լինում, վերջապէս Գողիթն ուշքի եկաւ և զսպելով իրան՝ սրբեց աչքերը: Յետոյ նա սիրալիր կերպով բռնելով երեխայի գլուխը, պինդ համբուրեց նրան:

— Դու պատուական և բարի տղայ ես, առաջ նա. իմ կարծիքով քո մէջ երաժշտութեան շնորհք կայ, կամենում ես, քեզ նուագել կ'սովորեցնեմ: Պատասխանի փոխանակ Բարսեղն աւելի պինդ փաթաթուեց ծերունիին: Այդ օրուանից սկսուեցին երաժշտութեան դասերը:

Բարսեղի ցոյց տուած յառաջադիմութիւնը ապաստածից գերադանցեց. պ. Գողիթը համո-

զուեց, որ կօշկակարութիւնը նրա արհեստը չէ: Նա լրջօրէն մտածեց և մի շաբաթից յետոյ վերջապէս վճռեց խօսել այդ մասին վարպետի հետ: Այս նպատակով նա կանչեց Ստեփանին իր մօտ և երկար խօսեց նրա հետ: Բարսեղը որք էր, իսկ Ստեփանը նրա հեռու ազգականը. ծնողների մահուանից յետոյ նա Բարսեղին գիւղից իր մօտ էր բերել և այդ պատճառով լիակատար իրաւունք ունէր նրա վրայ: Ստեփանը շատ բարի և խոհեմ մարդ էր. նա ուշադրութեամբ լսելով պ. Գողիթին, մի փոքր մտածեց և յանկարծ վճռողաբար գլուխը շարժեց:

— Եթէ դուք, պ. Գողիթ, այդպէս յարմար էք դատում, թող ձեր ասածը լինի. ես հոգուս մեղք չեմ անիլ. արգելք չեմ լինիլ երեխային, կարելի է որ ուղիղ դրա զործունէութեան ասպարէզն այդ է, վերցրէք դրան ձեռք մօտ, ինչ ուզում էք արէք, միայն թէ դա վերջը չ'ասի, որ ես իր կորստեան պատճառն եղայ: Վարպետ Ստեփան, բարձր ձայնով բացականչեց Գողիթը. դուք հրաշալի և հասկացող մարդ էք. ուրախութեամբ սեղմում եմ ձեր ձեռքը: Ստեփանին այդ գոգասանքը շատ դուր եկաւ: Հետեւեալ օրը Բարսեղը տեղափոխուեց երաժիշտ Գողիթի բնակարանը: Այդ օրուանից անցաւ տասներկու տարի: Մայրաքա-

դաքի հասարակաց մի զահլիճում ժողովուրդը անհամբեր սպասում էր նորեկ հմուտ ջութակահարի դուրս գալուն, որ արտասահմանից նոր էր վերադարձել և առաջին անգամ պէտք է բէմ դուրս գար ռուս հասարակութեան առաջ: Առանձին հետաքրքրութեան պատճառն այն էր, որ նոր արուեստագէտը ոչ միայն բուն ռուս էր, այլ և ծագում էր ստորին դասակարգից. նրա ազգանունը գոնէ հաստատում էր այդ բանը. Վասիլի Իւանովիչ Երշով:

Նրա մասին, արտասահմանում տուած անդրանիկ նուագահանդէսների առթով, շատ էին խօսում դեռ ևս Ռուսաստան գալուց առաջ: Մայրաքաղաքի շատ լրագրներում մանրամասն տեղեկութիւններ երևեցան նրա մասին:

Հասարակութիւնն անհամբեր սպասում էր երաժշտի դուրս գալուն: Վերջապէս դուռը բացուեց և բեմի վրայ երևաց արուեստագէտը. ամենքն էլ իրանց ուշադրութիւնը ուղղեցին դէպի նա:

Դա մի քսաններկու տարեկան թիկնաւէտ երիտասարդ էր. նրա լացն և ոսկրալից երեսը գեղեցիկ էին. նրա մոխրագոյն աչքերը նայում էին խաղաղ և կարծես յոգնած էին: Նա կանգնեց բեմի մէջտեղը և խորը զուլխ տուեց հասարակութեանը:

Կանայք իսկոյն նկատեցին, որ նրա ձեռքերը և ոտքերը անհամեմատ մեծ են և հագի Ֆրակը տոպրակի նման էր նրա վրայ: Մի խօսքով առաջին տպաւորութիւնը աննպաստ էր արուեստագէտի համար: Մինչև անգամ նրա շարժողութեան այն ձևը, որով վերցրեց ջութակը և կնտնտոցը, անճաշակ էր և անհաստատ:

Բայց ահա նա զուլխը թեքեց և շարժեց կնտնտոցը: Հասարակութիւնը ուշի ուշով դիտում էր: Առաջին աննպաստ տպաւորութեան պատճառով սկզբում հասարակութիւնը լսում էր բաւականին սառնասրտութեամբ: Բայց հինգ կամ վեց զարկից յետոյ իսկական երաժշտասէրների և հմուտ երաժիշտների մարմնով սառսուռ անցաւ... Երկու երեք րոպէ անցնելուց յետոյ ամբողջ զահլիճն ընկաւ հիասքանչ թմրութեան մէջ. բոլորի աչքերը ուղղուած էին դէպի երաժիշտը և ամենքն ագահութեամբ կլանում էին այն հոգեգրաւ հնչիւնները, որ կարծես պոկուելով կնտնտոցից և դիւթելով ու կախարդելով՝ սաւառնում էին ղողանջող, երգող, հեծեծող տարածութեան մէջ... Լցնում էին ճրագներով լուսաւորուած դահլիճը և ականաց թափանցում էին ունկընդիրների սրտերը: Իսկ նա նուագում էր

ողևորուած, աչքերը վեր բարձրացրած և կարծես թէ ոչինչ չէր նկատում իւր շուրջը:

Ամենավերջին կարգերում, դռան մօտ նրտած էր կորացած մէջքով մի կարմրաթուշ ծերունի: Նա յաճախ հանում էր գրպանից գունաւոր թաշկինակը և սրբում էր աչքերը:

Ա՛խ, որքան լաւ է, ա՛խ որքան գեղեցիկ է նուազում այս լակոտը, ասում էր ինքն իրան ծերունին:

Ես մեծ խելօքութիւն արեցի որ այն ժամանակ արգելք չ'եղայ դրան և շնորհիւ պ. Գողիբի. ահա թէ ինչպիսի մարդ դարձաւ նա. յայտնի բան է, որ սա կօշկակարի արհեստը չէ: Լաւ է, Աստուած վկայ, լաւ է...

Բայց ջութակի հնչիւնները սկսեցին թուլանալ և երկու երեք սաստիկ հարուածից յետոյ ամեն ինչ լռեց:

Տիրեց մեռելային լռութիւն... Հասարակութիւնը կարծես սպասում էր, որ հնչիւնները նորից կ'լսուին: Բայց արուեստագէտը վերջացրեց նուազելը և ցած դրեց ջութակը: Որտաձայն և անվերջ ծափահարութիւնը զորդացրեց դահլիճի կամարները: Հասարակութիւնը մոլեգնած էր, նա մոռացել էր և ներել էր երաժիշտին նրա արտաքին տգեղ աեսքը և անձողնի շարժուածքները, մինչև անգամ կանայք

այդ թուէին նրան շատ գեղեցիկ էին գտնում: Եւ, ուղիղ որ նա գեղեցիկ էր: Նրա երեսը փայլում էր մի առանձին ոգևորութեամբ, նրա մոխրագոյն աչքերը մթազնել էին և ունեցած յաջողութեան հսկարտ զիտակցութիւնը փայլում էր նրանց մէջ: Նա հրճւում էր, հրճւում էր կրկնապատիկ: Առաջին կարգի բազկաթոռներից մէկի վրայ, նստած էր մի նիհար և զառամեալ ծերունի. նրա մէջքը կորացել էր և գլուխը շարժւում էր: Նա սաստիկ յուզուած էր, նրա աչքերում փայլում էին արցունքները:

— Հրաշալի է, հրաշալի և զարմանալի լաւ է, շնորհաւոր նա ինքն իրան, բայց... բայց այնուամենայնիւ այն չէ, ինչ որ իմ Եղմունդն էր... Ո՛հ, եթէ իմ Եղմունդն ապրէր և հասնէր սրա հասակին, նա անհամեմատ բարձր կ'լինէր...

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1880 ԹՈՒՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ԱՆԳԱՍՆԵՐ ԻՍԿԱԿԱՆ
ՄՇՏԱԿԱՆ ՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

Ի սկզկան անդամը վճարում է տա-
րեկան 6 ռուբլի

և ստանում է գրքեր 5 ռուբլու:

Մշտական անդամը վճարում է միա-
նուգոչ պակաս քան 100 ռուբ-

լի և ստանում է գրքեր տա-
րեկան 5 ռուբլու:

Աշխատակից անդամը օգնում է Ըն-
կերութեանը 1) գտնելով անդամներ և 2) վա-
ճառելով Ընկերութեան հրատարակութիւնները:

Օտարաքաղաքացի անդամներին Վարչու-
թիւնը ուղարկում է գրքեր Ընկերութեան
ծախքով:

Ընկերութեան անդամ գրում են Ընկե-
րութեան գրասենեակում (Баятинская у.-
ца ծ. Гедеванова, контора Общества изда-

ния армянских книг) և աշխատակից ան-
դամների մօտ՝ Թիֆլիսում և զաւառներում:

Ընկերութեան հրատարակութիւնները վա-
ճառում են Թիֆլիսում՝

1) Ընկերութեան գրասենեակում:

2) Կենտրոնական գրավաճառանոցում (Го-
ловинский проспект, д. Мириманова, Цент-
ральная Книжная Торговля).

3) Խրդեկելի գրավաճառանոցում.

Իսկ զաւառներում՝ աշխատակից անդամ-
ների մօտ:

Գրավաճառանոցներին զեղջ 20%, ճանա-
պարհածախսը Ընկերութեան վրայ:

Կանխիկ կամ վերադիր վճարով գնողներին
զեղջ 25%:

Ուսումնարաններին, զիւղական և էժանա-
գին գրադարաններին զեղջ 30%:

27	Ուղղեցոյց գործնական շերամապահութեան. Կ. Մելիք-Շահնազարեանցի.	— 40
28	Ժամանակագրութ. Հայոց Յ. Գարդելի.	1 25
29	Վարդ-Ռէսլի. Սպիրի. Թարգ. Ի. Յ.	— 10
30	Նալ և Դամալեանթի. Ֆ. Շմիդտի	. — 20
31	Ատուած գիտէ արդարեւ ու մեղաւորը	— 7
32	Հաւատարիմ Սալիարին. Վալսնէրի	. — 10
33	Լինհարդ և Կերտրուդ. Պետալոցցի	. — 25
34	Յաւելուած ի գիրս պատմութեան Ասողկան Նորայր Բիւզանդացի.	. — 20
35	Նաւի վտ. քրաւորը. Մ. Ռոզենհալցի.	. — 15
36	Ուռնոց Յովսէփ, Ն. Սպիրի. Թարգ. Ի. Յ.	— 15
37	Մեծապատիւ Մուրացի. Յ. Պարոնեանի	— 40
38	Ազգային ջոջեր. Յ. Պարոնեանի.	. 1 —
39	Բը-ա-բա, Է. Օմէշկուլի.	. . . — 15
40	Շնիկ, Կաւրիկովալի.	. . . — 5
41	Շէդրինի երեք գրույնքեր.	. . . — 10
42	Տարասկոնցի Տարասէնը. Դոդէր	. — 40
43	Օրլէանի կոսը, Օտրոգորսկու	. . . — 25
44	Արարատսկու ինքնակենդանագրութիւնը	. — 75
45	Գաղափարական քահանայ Պօտապենկ.	— 75
46	Ընտանիքի լոյսը Աննենսկալա	. — 10
47	Հոսնոսի ձեռատետրը Յ. Պարոնեանի	. 1 —
48	Բիմիա Բոսկուլի, Թարգմ. Ա. Մելիք-Ալլահով.	— 40
49	Շէդրինի երեք վէպիկ, Թ. Մ. Ղազարեան	— 15
50	Սասմալ ծուր, Գարեգին սարկ.	. — 50
51	Զաւախքի բուրմունք, Ն. Լալապեանցի.	— 25
52	Դատարարակութիւն Սպենսերի	. . 1 —
53	Մըռան. Օ. Ի. Շմիդտ Թ. Ա. Բալանթար	— 25
54	Խան-Միրան գրեց Սէլան.	. . . — 20
55	Տարառ-Բուլբա Ն. Գոգոլի.	. . . — 40
56	Փշրանքներ, Գ. սարկ. Յովսէփեան.	. — 50
57	Երկու քուր, Ղ. Աղապեանց.	. . . — 25
58	Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հալիլի	— 60
59	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հալիլի	— 50
60	Փորձանքների բժշկարան Բրոքերի	. — 20
61	Մակբէթ, Շէքսպիրի Թ. Ս. Մալխասեան.	— 50
62	Պատեօր, Ա. Բալադեանի և Ա. Բալանթարի	— 20

63	Խօղերա, բժ. վ. Արծրունու . . .	— 5
64	Խարաղի տղա, Ս. Քամալեանի . . .	— 40
65	Հանրամատչելի բնախօսութիւն վ. Լուսինեփիչի. Թարգմ. Կ. Գիւլնաղարեան . . .	1 —
66	Փարաւոնի աղջիկը. Էքերսի Թարգմ. Գ. Շահբուզադեանի . . .	— 80
67	Խռն-խոր. Յ. Ղաղարեանցի . . .	— 60
68	Էլզուլա վէպ Թարգ. Տ. Փիրումեանցի . . .	— 45
69	Զորբորդ մոզը. վան-Դէշի . . .	— 5
70	Դրախտի ընտանիք, Խրիմեան Հալրիկի . . .	— 50
71	Սիրաք և Սամուէլ, Խրիմեան Հալրիկի . . .	— 50
72	Զրոյցներ հողի մասին Ս. Բալադեանի . . .	— 15
73	Ատողարաշխութիւն Ֆրամմարիոնի . . .	1 —
74	Մանուկների հոգատարութիւնը Ե. Ա. Պօկ-րօվսկի, Թարգ. բժ. Թ. Զաքարեան . . .	— 20
75	Սուկուչի հաւիկը, Պ. Նեղովանով . . .	— 15
76	Երկու հէքեաթ, Կարմէն Սիւվալի . . .	— 10
77	Կովկասի գերին, Լ. Տօլստօի Թարգմ. Պ. Պ. . .	— 20
78	Անճոռնի բաղիկ, Անդերսէն . . .	— 5
79	Վէպիկներ, Շիրովանդադէի . . .	— 40
80	Դարսիւնիգմ, Ս. Բալադեանի . . .	— 40
81	Պետրոս Դուրեան, Արշակ Զօպանեանի . . .	— 50
82	Շիւիօնի կալանաւորը, Մօր. Հարութ. Կ. Գ. . .	— 60
83	Համէա Շէկսպիրի, Թ. անգ. Յով. Խոն Մ. . .	— 75
84	Քենական պատմ. Հալոց մասն Ա. . .	— 1
85	Նոյն, Մասն Բ. . .	— 1
86	Նոյն, Մասն Գ. (Մամուլի տակ է) . . .	—
87	Նոյն, Մասն Գ. . .	—
88	Պատմութիւն Հալոց, » » Ա. Պալատանեանի . . .	—
89	Ակնաշնութիւններ, » » Յ. Ճանիկեանի . . .	—
90	Ուրբինօնցի մանուկը, Ուրբի Հէքիաթներից . . .	10
91	Կօչկակարը երաժիշտ Թ. օր. Ն. Ղալումեան . . .	5

1740

000625

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0006256

